



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/131/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

21 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի մայիսի 21-ին քննելով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Էդգար Միքայելի Անտոնյանի ընտանիքի անդամ Միքայել Անտոնյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/131/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով, Էդգար Միքայելի Անտոնյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել է վերջինիս ընտանիքի անդամ Միքայել Անտոնյանի գույքային դրությունը, այդ թվում նաև՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

Միքայել Անտոնյանը 2023 թվականին 2,000,000 ՀՀ դրամով օտարել է 2020 թվականից սեփականության իրավունքով իրեն պատկանող [REDACTED] մակնիշի տրանսպորտային միջոցը, մինչդեռ նշված տրանսպորտային միջոցի օտարման գործարքը և դրա արդյունքում ստացված եկամուտը չի հայտարարագրել Հայտարարագրում:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 7-ին Միքայել Անտոնյանին է հասցեագրել թիվ 01/1930-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 17:00-ին, Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 17:00-ին, գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Միքայել Անտոնյանը ստացել է 2025 թվականի մայիսի 14-ին (հիմք՝ AL 0127860193AM անդորրագիրը):

1.3 2025 թվականի մայիսի 15-ին պատշաճ ծանուցված Միքայել Անտոնյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 82/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Միքայել Անտոնյանի բացակայությամբ 2025 թվականի մայիսի 21-ին, ժամը՝ 17:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Միքայել Անտոնյանը 2025 թվականի մայիսի 15-ին թիվ ՎԻՎ 82/25 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազման ժամանակ հայտնել է հետևյալը «(...) նշված տրանսպորտային միջոցը չեմ օտարել, 2,000,000 դրամ եկամուտ չեմ ստացել, ուստի չեմ հայտարարագրել: Տրանսպորտային միջոցը տվել եմ հորեղբորս տղային պարտքի դիմաց և տվել եմ նոտարական վավերացված լիազորագիր: Նշված պարտքը եղել է հորս պարտքը, որը ես եմ վճարել, դիմացը մեքենան եմ տվել:»:

2025 թվականի մայիսի 19-ին Միքայել Անտոնյանը Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը. «(...) 2024 թվականին լրացրել եմ բարեվարքության համար նախատեսված իմ գույքային դրույթները 2023 թվականի ընթացքում ունեցած: Թերթիկում նշել եմ, որ 2023 թվականին 2,000,000 ՀՀ դրամ գումարով օտարել եմ ինձ պատկանող 2004 թվականի արտադրության [REDACTED] մակնիշի ավտոմեքենան, սակայն դրա արդյունքում ստացված եկամուտը չեմ հայտարարագրել, քանի որ հայրս՝ Ֆրունզ Հակոբի Անտոնյանը [REDACTED] հորեղբորս որդուն Հայկ Սմբատի Անտոնյանին ունեցել է պարտք 2.000.000 ՀՀ դրամ գումար: Հայկ Անտոնյանը ով բնակվում է ՀՀ տարածքից դուրս [REDACTED] ինձանից անընդհատ պահանջել է հորս պարտքը, և ես որոշեցի հորս պարտքի դիմաց ինձ պատկանող [REDACTED] մակնիշի ավտոմեքենան տալ իրեն: 2023 թվականին, օրը և ամիսը հստակ չեմ հիշում ինձ պատկանող [REDACTED] մակնիշի ավտոմեքենան տարել եմ ՀՀ տարածքից դուրս հորեղբորս որդուն տալու նպատակով՝ պարտքի դիմաց՝ 2.000.000 ՀՀ դրամ դիմաց փոխարեն: Որոշ ժամանակ անց, հորեղբորս որդի Հայկ Անտոնյանը ինձանից խնդրել է լիազորագիր [REDACTED] մակնիշի ավտոմեքենայի վերաբերյալ, որը ես տվել եմ իր խնդրանքով՝ լիազորագրով /նոտարական վավերականությամբ/ [REDACTED] հանձնել եմ Ռուդիկ Ալեքսանդրի Պողոսովին»:

Միքայել Անտոնյանը կից ներկայացրել է տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի և Ռուդիկ Ալեքսանդրի Պողոսովին 2023 թվականի նոյեմբերի 10-ին տրված լիազորագրի պատճենները:

2025 թվականի մայիսի 15-ին ՎԻՎ արձանագրության կազմման ժամանակ Միքայել Անտոնյանը հայտնել է հետևյալը. «(...) նշված տրանսպորտային միջոցը չեմ օտարել 2.000.000 ՀՀ դրամով և եկամուտ չեմ ստացել, ուստի և չեմ հայտարարագրել: Տրանսպորտային միջոցը տվել եմ հորեղբորս տղային պարտքի դիմաց և տվել եմ նոտարական վավերացված լիազորագիր: Նշված պարտքը եղել է հորս պարտքը, որը ես եմ վճարել, դիմացը մեքենան եմ տվել»:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/131/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների վերլուծություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ՝ Էդգար Միքայելի Անտոնյանի՝ պաշտոնատար անձի 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում հայտարարագրված տվյալների համաձայն Միքայել Անտոնյանը հանդիսանում է նրա հետ համատեղ բնակվող չափահաս անձ:

3.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ Միքայել Անտոնյանը հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 2023 թվականի նոյեմբերի 10-ին Միքայել Անտոնյանը լիազորագիր է տվել Ռուդիկ Պողոսովին վերջինիս կողմից սահմանված գնով և պայմաններով վաճառելու իրեն պատկանող [REDACTED], տիպարի, SU տեսակը՝ բեռնաուղևորատար, թողարկման տարեթիվը՝ [REDACTED], նույնացման համարը [REDACTED] [REDACTED] տրանսպորտային միջոցը:

3.4 2023 թվականի նոյեմբերի 22-ին լիզորված անձ Ռուդիկ Պողոսովի միջոցով 2,000,000 ՀՀ դրամով օտարվել է 2020 թվականից սեփականության իրավունքով Միքայել Անտոնյանին պատկանող [REDACTED] մականիշի տրանսպորտային միջոցը, մինչդեռ նշված տրանսպորտային միջոցի օտարման գործարքը և դրա արդյունքում ստացված եկամուտը հայտարարագրված չեն Հայտարարագրի Բ.2.2.2 «Տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտային միջոց» և Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժիններում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:

Նույն հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտները.

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն, եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը:

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անգգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ Քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Էդգար Միքայելի Անտոնյանի ընտանիքի անդամ Միքայել Անտոնյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ, այն է՝ Հայտարարագրի Բ.2.2.2 «Տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտային միջոց» և Գ.1.1 «Հաշվետու տարվա

Եկամուտներ» ենթաբաժիններում չի հայտարարագրել՝ 2023 թվականին 2,000,000 ՀՀ դրամով օտարված, 2020 թվականից սեփականության իրավունքով իրեն պատկանող [REDACTED] մականիշի տրանսպորտային միջոցի օտարման գործարքը և դրա արդյունքում ստացված եկամուտը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Միքայել Անտոնյանը Հայտարարագրի Բ.2.2.2 «Տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտային միջոց» և Գ.1.1 «Հաշվետու տարվա Եկամուտներ» ենթաբաժիններում չհայտարարագրելով [REDACTED] մականիշի տրանսպորտային միջոցի օտարման գործարքի և դրանից ստացված եկամուտի վերաբերյալ տվյալները, խախտել է Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետը և թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք: Այդուհանդերձ հաշվի առնելով այն, որ Միքայել Անտոնյանի կողմից ներկայացված պարզաբանումների և դրանք հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերջինս տրանսպորտային միջոցն անձամբ չի օտարել, այլ տվել է հոր պարտքի դիմաց, օտարման գործարքը կատարել է նրա կողմից լիազորված անձը և տվյալ տրանսպորտային միջոցի օտարումը փաստացի այլ կերպ բացահայտվել է՝ համապատասխան նշում կատարելով «Առկա է տվյալ տարվա վերջում»

դաշտում, ինչի արդյունքում տրանսպորտային միջոցը չի հայտարարագրվել որպես տարեվերջի դրությամբ առկա գույք , Հանձնաժողովը գտնում է, որ հայտարարատու անձի կողմից թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Միքայել Անտոնյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միքայել Անտոնյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Միքայել Անտոնյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ